Հայ-Ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փող. 123)

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ԴՈՑԵՆՏ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

Էդգար Ավետիսյանի՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Էդգար Ավետիսյանի՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության թեման արդիական է, ներկայացվում է որպես ժողովրդավարության կայացման համար առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի համալիր հետազոտություն: Հեղինակին հաջողվել է թեմայի արդիականության վերաբերյալ ներկայացնել այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնավորում են դրա այժեականությունը:

Համակարծիք լինելով հեղինակի այն պնդման հետ, որ հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում տեղեկության հետ մարդու հարաբերության շրջանակի ընդլայնմամբ, ինչի հետևանքով օրեցօր ավելի է խստանում մի կողմից՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու հարաբերություններին իրավական գնահատական տալու, մյուս կողմից՝ մարդկանց

առավելագույն իրազեկվածության ապահովման պահանջները (էջ 3-4): Միաժամանակ հեղինակը Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության վերաբերյալ հետազոտություն իրականացնելու արդիականությունն արդարացիորեն պայմանավորում է նաև 2015 թվականին խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունում տեղեկատվության ազատության նկատմամբ արտահայտվող մոտեցմամբ, ըստ որի՝ այն ներառվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ (հոդված 42), իսկ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքն առանձնացված և սահմանված է այլ հոդվածով (հոդված 51):

Ատենախոսության թեմայի այժմեականությունն ավելի է հիմնավորում նաև այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են 2003 թվականին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում տեղ գտած նորմերի ու դրանց կենսագործման ոչ բավարար և տարակարծիք դրսևորումները, ինչպես նաև արտասահմանյան (առավելապես եվրոպական) և հայկական դատական պրակտիկայում ներկայացված դիրքորոշումների և դրանց համատեքստում անձի հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության հիմնախնդիրների վերհանման վերաբերյալ առկա պահանջը:

Հեղինակին հաջողվել է հետազոտությամբ բարձրացնել թեմայի վերաբերյալ գիտագործնական նշանակություն ունեցող հարցադրումներ, որոնց քննարկումն անցկացրել է սահմանադրաիրավական և եվրոպական իրավական չափորոշիչների լույսի ներքո: Մասնավորապես, ներկայացվել է տեղեկատվության ազատության ընդհանուր էությունը՝ անդրադառնալով այս իրավունքի ծագումից մինչև միջազգային ճանաչում ընկած զարգացմանը, մեջբերել է տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա տեսական մոտեցումները և իրավունքի աղբյուրներում տրված ձևակերպումները, տարանջատել ու առանձին հետազոտման է ենթարկել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի երկու տեսակները՝ ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը: Հետաքրքիր է, որ տեղեկատվության ազատության իրավունքի տարանջատումը հեղինակն իրականացրել է ՀՀ Սահմանադրությունում տեղեկատվության ազատությանը վերաբերող երկու հոդվածների՝ կարծիքի արտահայտման ազատության և տեղեկություններ ստանալու իրավունքի համատեքստում:

Բացի այդ, ատենախոսությամբ բարձրացված հարցադրումները ներկայացվել են նաև նորմատիվային իրավակարգավորումների կատարելագործման նպատակով, որն ավելի է ընդգծում աշխատանքի գիտագործնական բնույթը:

Կարծում եմ, որ ատենախոսական աշխատանքը կազմված է գիտական պատշաճ մակարդակով, հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն, տրամաբանական հստակ կառուցվածք ունեցող հետազոտական աշխատանք, որը շարադրված է գիտական ընդունելի լեզվաոճով:

Հեղինակը հետազոտությունն անցկացնելիս հաջողվել է կիրառել թե՛ հայկական, թե՛ արտասահմանյան արժեքավոր և անհրաժեշտ աղբյուրներ: Ատենախոսն իրավացիորեն նկատել է, որ հայկական իրավական միտքը տեղեկատվության ազատությանը վերաբերող որոշ մեկնաբանություններ ու վերլուծություններ ներկայացրել է, սակայն դրանք դիտարկվել են մի դեպքում՝ սոսկ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների շրջանակում ու տեսանկյունից, մյուս դեպքում՝ տեղեկատվության ազատության տարբեր դրսևորումների շրջանակում: Վերջիններումս տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը կենտրոնական ու առանցքային ուսումնասիրման առարկա չէ, և, ըստ այդմ, չի արժանացել խորն ու համապարփակ հետազոտման: Սրա վկայությունն է այն, որ ատենախոսության շրջանակում, մեծ մասամբ, հետազոտվել է արտասահմանյան աղբյուրներ:

Ատենախոսը մեծ ուշադրություն է դարձրել նաև նորմատիվային աղբյուրների համակարգային վերլուծությանը, որոնց թվում են հայտնվել ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային, արտասահմանյան (հիմնականում եվրոպական) իրավական համակարգերում առկա նորմատիվային ու դատական ակտերը:

Հեղինակը դրսևորել է գիտական տարբեր մոտեցումները պատշաճ ներկայացնելու, համադրելու և դրանց արդյունքում հիմնավոր եզրահանգումներ կատարելու ունակություն: Ատենախոսությունն աչքի է ընկնում նաև պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարված եզրահանգումների ու դատողությունների ինքնատիպությամբ, գիտական հիմնավորվածությամբ ու համակարգային կապով: Հետազոտությամբ պահպանվել են ատենախոսության ձևավորման պահանջները, այն կազմված է պատշաճ գրական հայերենով, հիմնականում զերծ է վրիպակներից և խմբագրական այլ թերություններից:

Ատենախության համար առանցքային հանդիսացող պաշտպանության դրվող դրույթներն ու եզրակացությունում առկա մտահանգումներն էական և ամբողջական պատկերացում են տալիս հետազոտությամբ նվաճված գիտագործնական արդյունքների մասին, որոնք, գտնում ենք, մասնագիտական և իրավակիրառ շրջանակում կարող են նպաստել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի առավել ապահովմանն ու պաշտպանությանը:

Հետազոտությունն աչքի է ընկնում նաև տեղեկատվության ազատության հիմնական իրավունքին նոր դիտանկյուններից ներկայացնելու ու հետազոտելու յուրահատկությամբ, որոնք կարող են հանդիսանալ նաև Հայաստանում նման հետազոտության առաջին փորձերից մեկը: Այսպես, հեղինակի մատնանշմամբ հետազոտությամբ առաջին անգամ ներկայացվել է հայկական իրավական մտքի պատմությունում տեղեկատվության ազատության ունեցած դերն ու զարգացումը, ՀՀ Սահմանադրությամբ որդեգրած՝ կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկատվության ազատության հարաբերակցությունը, ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը, տեղեկատվության ազատության ու ժամանակակից իրավունքներից՝ մոռացված լինելու իրավունքի մրցակցությունը, հատուկ՝ հանրային մարմինների մոտ գտնվող տեղեկությունների ազատության երկու դրսևորումները՝ տեղեկություն ստանալու և տեղեկացված լինելու իրավունքները, ինչպես նաև մասնավոր մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների վերաբերող հիմնահարցերը:

Դրական գնահատելով ատենախոսությունը, այնուամենայնիվ, դրա որոշ դրույթների վերաբերյալ առկա են դիտողություններ և նկատառումներ.

1. Ատենախոսությունում գործնականում անդրադարձ չի կատարվել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ու համացանցի հարաբերակցությանը, համացանցի ազդեցությանն ու համացանցի միջոցով այս իրավունքի ապահովման ու պաշտպանության որոշ հարցերին: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը հետազոտել է համացանցի հետ առնչվող հարցադրումներ (օրինակ՝ մոռացված լինելու իրավունքին անդրադարձը), այնուամենայնիվ, կարծում եմ, որ դրանք պետք է գերակշռեին տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ժամանակակից հիմնախնդիրները վերհանելու և համարժեք լուծումներ առաջադրելու նպատակով:

2. Ատենախոսը «Տեղեկատվության ազատությունը՝ որպես մարդու հիմնական իրավունք. տեսահիրավական հիմքերը, առանձնահատկություններն ու եվրոպական իրավական չափորոշիչները» վերտառությամբ 1.2-րդ ենթագլխում երեք էջ (29-31 էջեր) հետազոտել է «տեղեկություն» - «տեղեկատվություն» բառերի ստուգաբանական նշանակության ու ճիշտ կիրառման հարցեր: Գտնում եմ, որ ատենախոսական աշխատանքի համար այդքան էլ արդարացված չէ մի քանի էջ նվիրել միայն բառի նշանակության ու կիրառության հարցի պարզմանը, այն դեպքում, ըստ էության, հետազոտման առարկայի շրջանակում այն գիտագործնական ոչ մեծ կարևորություն ունի: Միաժամանակ, նույն ենթագլխում նշվում է «*ՀՀ լեզվի կոմիտեի կողմից տրված պարզաբանման համաձայն (...)*», սակայն չի վկայակոչվում, թե որտեղ և ինչպես է ՀՀ լեզվի պետական կոմիտեն ներկայացրել տվյալ պարզաբանումը:

3. Պաշտպանության ներկայացված 5-րդ կետի դրույթը, կարծում եմ, ունի ընդհանրական բնույթ: Դրանում հեղինակը նշում է. «(...) *մոռացված լինելու հիմնական իրավունքի ծագման իրավական հիմքերը չպետք է վտանգեն ընդհանուր տեղեկատվության ազատության ապահովումը, ուստի պետք է համապատասխանեն վերջինիս իրավաչափ սահմանափակումներին: Հակառակ պարագայում կվնասվի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը*» (էջ 7): Թեև մոռացված լինելու իրավունքի ու տեղեկատվության ազատության հարաբերակցությանը հեղինակն անդրադառնում է համապատասխան ենթագլխում, սակայն դրա արդյունքում, անհրաժեշտ է, որպեսզի հեղինակը հստակեցնի, թե ինչպես պետք է մոռացված լինելու իրավունքի ծագման իրավական հիմքերը չվտանգեն տեղեկատվության ազատության ապահովմանը, ինչ ուղենիշներով ու չափորոշիչներով այն պետք է իրականացվի:

4. Ատենախոսության եզրանգումների մեջ (կետ 3-րդ) հեղինակը նշել է. «*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բնօրինակում արտահայտվելու ազատության նորմի (հոդված 19) և նշված Հռչակագրի հայկական պաշտոնական թարգմանության միջև առկա անհամապատասխանություն ու դրա (հայկական պաշտոնական թարգմանության) ենթադրյալ արտացոլումը մայր օրենքի քննարկվող հոդվածի ձևակերպման մեջ (...)*»: Իմ համոզմամբ հեղինակի նման դատողությունները բավականին խնդրահարույց են և անհրաժեշտ են որոշակի հստակեցումներ ու ծանրակշիռ հիմնավորումներ, որոնք, տվյալ դեպքում, ատենախոսությունում առկա չէին:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նկատառումներն ու դիտողություններն ունեն մասնավոր բնույթ և չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը: Հեղինակը թե՛ տեսական, թե՛ գիտագործնական նշանակություն ունեցող մոտեցումների ու եզրահանգումների է եկել, կատարել է ծավալուն և արդյունավետ հետազոտություն:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ կարծիքը՝ կարծում եմ, որ Էդգար Ավետիսյանի՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)» վերտառությամբ ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի հեղինակն արժանի է ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր՝

Աշոտ Սերյոժայի Հայրապետյան

Ա. Ս. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ.
Եվրասիա միջազգային համալսարանի պրոռեկտոր՝ *Ռ. Մարկոսյան*